

Խորհիթը մտաւ մի օրիորդ մօտ յիսուն տարեկան : Այդ հիւանդի ընդրն է : Մե. Լանկան եկել էր Թողութիւն խնդրելու եղբորից : Թողութիւն խնդրեց երեք անգամ, նստեց նրա մօտ և սկսեց անտնալ :

— Եղբայր իմ սիրելի, միակն ես իմ և դու էլ ինձ Թողնում ես : Մէր ես դու ինձանից հեռանում :

— Մի՛ քօքուի, Մեկանկա, ասեց և երեցփոխը, — ախր դեռ նա չի՛ մեռել : Երբ եկել էք, ուրեմն նստեցէք մարդկանց մօտ, իսկ մենք ձեր աղաղակը լսել չենք կամենում :

Մեկանկան համբուրեց հիւանդի ձեռք :

— Եղբայր Վասիլյայ, — սկսեց խնդրել, — սուէք ինձ այս հին քուրքը : Գուք երկու հատ ունիք, իսկ ես այնքան աղքատ եմ, այնքան ցուրտ եմ զգում, նայեցէք, ձեռք դաժան, իսկ ես՝ ամառուայ ...

— Չեմ կարող, ընդրս, — տնքաց Վասիլը, — Օհնանին պէտք է ... Օխ, օխ... Կինը բռնեց Մեկանկայի թիկունքից :

— Մի՛ գլուխը տանէք հիւանդի, այլ գնացէք նստէք լուսամուտի մօտ :

Մեկանկան յետ նահանջեց, կանգնեց դրան մօտ և սկսեց զանգատուել. այդպէս է այժմ աշխարհումս : Եւ բաժանութեան մէջ էլ ինձ զրկեցին, չը տուեցին ամբողջ բաժինս, ինչ որ հօրիցս յետոյ ինձ հասնում էր և այժմ մի հին քուրքն էլ են խնայում : Այդպէս : Աստուած ամեն բան տեսնում է !

Վասիլը պառկած էր մէջքի վրայ՝ աչքերը յառած առաստաղին, յետոյ՝ դարձրեց ամենքի վրայ և պօռնեքը շարժեց : Երեցփոխը աւելի մօտ եկաւ և հարցրեց. ինչ է կամենում ասել :

— Սօսինները հաւասար կիսել, — շշնջաց հիւանդը :

— Սօսինները կիսել, — բարձրաձայն կրկնեց երեցփոխը :

— Նշանակում է, կէսը ձեզ, — բացատրեց հարեւանը կնոջը, — իսկ կէսը՝ Գրինկային :

— Այդպէս լաւ է, ոչ ոք չի՛ զրկվում, — համաձայնուեց միւրս :

Կինը բերեց պահարանից կանաչ շիշը՝ և սկսեց հիւրասիրել երեցփոխին և հարեւաններին, իսկ Վասիլը, երեսը շուտ տալով պատին՝ հողին աւանդեց :

Միւս օրը վաղ առաւօտեան զանգակնեւրը զողանջում էին նրա համար : Ասում էին, որ նրա մահը եղել է թեթեւ :

Ռուս. Թրգմ. ԱՅՏ. ԲԵԿ-ՅՈՒՍԵԲԿԱ

ՆԱՅԿԱԿԱՆ ՆՕԹԱՆԵՐ

Փարպեցիմ զոռց զիտի վրայ խօսելով՝ կ'ըսէ, թէ Ս. Մահակ « եղիւ կառարկապէս հմուտ երգողական տափն », հեռտորակամ յորդասաց յայտնաբանութեամ, ես առաւել տեղեկացանք փիլիսոփայական արուեստից ցուցամիր » :

Ինչ կը նշամակէ երգողական տա. Ամշուշտ՝ ո՛չ ձայնաւոր (վասն զի անտեղի է հայրապետ մը գովել՝ ձայնաւոր տառերը ջանջնալու մամար) այլ անտարակոյս ռօթաւոր. այսպէս կը հասկնամ Փարպեցու ըմթեցողութեթն շատեր՝ եզրակացնելով թէ Ե. զարու մէջ Թօթմանը ունէինք (յայտատուր Տարօծեցիէմ շատ առաջ) և հիւանալով միաժամանակ՝ բացատրութեամ ճշգոութեամբ վրայ. յիրաւի տաւր ձայներ կը ներկայացնէ՝ ճիշդ այնպէս ինչպէս ռօթան, և եթէ հարկ ըլլայ վերջինս թարգմանել՝ ամշուշտ ամենալաւ բառն է երգատա :

Այս ամէնը սակայմ՝ սխալ ըմթեցմամ մը վրայ հիմնուած է. Փարպեցիմ այդ տեղւոյմ մէջ կը գովէ Ս. Մահակայ յոճարէն լեզուի Յօկատամբ ունեցած հմտութիւթը. « Ոչ լինէիմ (թարգմանիք մեր) քաւակն ի վճարել անսխալ ուղղակի առանց առաջնորդելոյ Սոցա սրբոյ հայրապետիմ Մահակայ, որ յոճ աուցեց անցուցամէր վարժիք զբազում գիտնովք Յունաց, եղիւ կատարելապէս հմուտ երգողական տափն և հեռտորակամ յորդասաց յայտնաբանութեամ, ևս առաւել տեղեկացեալ փիլիսոփայական արուեստից ցուցամիր » :

Փարպեցիմ չէր կարող Ս. Մահակայ երաժիշտ ըլլալը իրելի փաստ բերել յունարէն լեզուի ունեցած անսխալ հմտութեամբ. և յետոյ ռօթաւորը ինչ կապ ունիմ յայրորդ հեռտորութեամ և փիլիսոփայութեամ հետ. հեռուաբար խնդրական բառը պէտք է սրբագրել :

« Եղիւ հմուտ երգողական տարիցմ » : Ս. Մահակ, ըստ Փարպեցու տեղեկակ էր Յունաց (եկեղեցական) երգերում և բանաստեղծութեանց, հեռտորութեամ և փիլիսոփայութեամ :

Նա այս երեքը կը յիշատակէ՝ ցոյց տալու համար թէ Ս. Մահակ միայն յունական պատմութիւթներ հասկնալու կարող չէր, այլ նաեւ աւելի բարձր և դժուարամասնելի գիտութիւթներ : Ըստ այսմ՝ « երգողական տառ » ըմթեցմամ հետ՝ սրբագրելի են Սաե ամոր վրայ հիմնուած բոլոր ենթադրութիւթները՝ չայոց հիմ երաժշտութեամ մասիմ :

Հ. Կ. Տ. ՍԱԼՅԱՆԵՍ

1. Մի տեսակ խմբ է. — Ծամ. Թարգմ.